ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱԿՈՐՈՒՄ

Ինչ է և ինչու է անհրաժեշտ

www.src.am

?

Ինչ է ապրանքի թվային դրոշմավորումը

Դրոշմավորումը հսկիչ(նույնականացման) նշանի՝ DataMatrix հատուկ թվային ծածկագրի տեղադրումն է դրոշմավորման ենթակա ապրանքի վրա: Այն վաճառքից առաջ արտադրողի կամ ներմուծողի կողմից փակցվում կամ տպագրվում է ապրանքի փաթեթավորման վրա՝ հնարավորություն տալով տեսնելու, թե ապրանքը երբ և ում կողմից է արտադրվել կամ ներմուծվել երկիր և սպառման որ փուլում է այն գտնվում:

?

ԻՆՉՈՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ

Դրոշմավորումը կարևոր է բոլոր մասնակիցների համար.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ իրականացնում է վերահսկողություն շրջանառությունում գտնվող յուրաքանչյուր ապրանքի նկատմամբ, պայքարում է զեղծարարության դեմ և ձեռք բերում լրացուցիչ գործիք՝ ստվերի դեմ պայքարի ու հարկային վարչարարության բարելավման գործում:

?

ԻՆՉՈՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ

ՍՊԱՌՈՂԸ պաշտպանվում է անորակ և կեղծ արտադրանքից՝ հնարավորություն ունենալով e-Mark բջջային հավելվածի միջոցով ստուգել ապրանքի իսկությունն ու սպառման ժամկետը և վստահ լինել, որ ապրանքը համապատասխանում է պետության սահմանած որակի չափանիշներին:

ՏՆՏԵՍՎԱՐՈՂԸ պաշտպանվում է անբարեխիղճ մրցակցությունից, քանի որ շուկան զերծ է մնում կրկնօրինակումներից և կեղծված ապրանքների շրջանառությունից:

Ինչպես է աշխատում դրոշմավորումը

Ներմուծող կամ արտադրող ընկերությունը գրանցվում է ազգային օպերատորի համակարգում, ձեռք բերում DataMatrix ծածկագիր և մինչև օտարելը փակցնում այն ապրանքի վրա: Ծածկագիրը թույլ է տալիս ապրանքաշրջանառության ցանկացած փուլում իրազեկ լինել ապրանքի տեղաշարժից: Վերջնական սպառման ժամանակ ծածկագիրը սկանավորվում է վաճառակետում՝ ՊԵԿ-ին տեղեկացնելով ապրանքի շրջանառությունից դուրս գալու մասին:

Ինչպես սկսել դրոշմավորումը

Դրոշմավորումն իրականացնելու համար արտադրող կամ ներմուծող ընկերությունը պետք է գրանցվի ազգային օպերատորի e-Mark համակարգում հետևյալ քայլերով.

1 էլեկտրոնային կամ թղթային եղանակով ներկայացնել գրանցման դիմում,

2 կնքել պայմանագիր,

3 ստանալ համակարգից օգտվելու համար մուտքանուն և գաղտնաբառ,

4 գրանցել համապատասխան աշխատակիցներ համակարգից օգտվելու համար,

5 ձեռք բերել ծածկագրեր:

Ինչ փուլերով է անցնում դրոշմավորումը

Պարտադիր դրոշմավորման ապրանքների ցանկը պարբերաբար ընդլայնվում է: Յուրաքանչյուր ապրանքախումբ սկզբում անցնում է փորձնական ծրագրի փուլ, այնուհետև դրոշմավորումը դառնում է պարտադիր:

Փորձնական ծրագիրը ոլորտի ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս ծանոթանալ օրենքի պահանջներին, տեխնիկապես պատրաստվել և ժամանակ ունենալ պարզաբանել առաջացած խնդիրները՝ աշխատելով ՊԵԿ-ի և ազգային օպերատորի մասնագետների հետ:

Որ ապրանքների վրա է կիրառվում

Պարտադիր դրոշմավորվում են.

ծխախոտային արտադրանք,

ալկոհոլային ապրանքներ,

փաթեթավորված խմելու ջուր:

Իրականացվում են փորձնական ծրագրեր.

կաթնամթերք, գարեջուր,

կոսմետիկական կամ դիմահարդարման և մաշկի խնամքի, լվացող և մաքրող միջոցներ,

ոչ ալկոհոլային ըմպելիքներ,

պահածոյացված մթերք, մակարոնեղեն,

շոկոլադ և կակաո պարունակող սննդամթերք,

կենդանական և բուսական յուղեր:

Ինչ կլինի ապրանքը չդրոշմավորելու դեպքում

Ներմուծող կամ արտադրող ընկերության կողմից հսկիչ (նույնականացման) նշաններով ապարանքը չդրոշմավորելը համարվում է օրենքի խախտում և ենթակա է պատասխանատվության:
Իսկ մանրածախ վաճառքի կետում DataMatrix ծածկագիրը չսկանավորելը դիտվում է ՀԴՄ կիրառման կանոնների խախտում, և պատասխանատվությունը կրում է վաճառքի կետը: